Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ - 2024

Հաշվետվություն Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված՝ Համաշխարհային գենդերային անհավասարության զեկույցի (2025թ.) վերաբերյալ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 3

2. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ 5

2.1. Համաշխարհային միտումներն ու արդյունքները 5

2.2. Գենդերային անհավասարությունն աշխարհի տարբեր հատվածներում 6

3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 8

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 13

ԱՄՓՈՓՈՒՄ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գենդերային անհավասարությունը շարունակում է մնալ համաշխարհային հասարակական-տնտեսական համակարգերի կարևորագույն խնդիրներից մեկը: Այն արտահայտվում է տնտեսական գործունեության մեջ կանանց սահմանափակ ներգրավմամբ, աշխատավարձերի տարբերությամբ, քաղաքական որոշումների կայացման գործընթացում նրանց թերի մասնակցությամբ և կրթական ու առողջապահական ռեսուրսների անհավասար բաշխմամբ:

Գենդերային անհավասարության խնդիրը միայն սեռով պայմանավորված խտրականության և դրա հետևանքով կանանց իրավունքների խախտման հարց չէ: Այն ոչ միայն սահմանափակում է անհատների հնարավորությունները, այլև խոչընդոտում է հասարակության զարգացումը: Այդ իսկ պատճառով դրա հաղթահարումը ունի ոչ միայն բարոյական և իրավական, այլև սոցիալ-տնտեսական նշանակություն: Մարդկային ներուժի լիարժեք իրացումը հնարավոր չէ, եթե բնակչության կեսը՝ կանայք, շարունակում են բախվել կառուցվածքային խոչընդոտների ու համակարգային խտրականության: Հետազոտությունները ցույց են տալիս, որ գենդերային հավասարության բարձր մակարդակ ունեցող երկրները նաև ունեն տնտեսական ավելի բարձր աճ, քաղաքական կայունություն և սոցիալական համերաշխություն:

Վերջին տասնամյակներում գենդերային անհավասարությունը վերածվել է համաշխարհային մարտահրավերի՝ անցնելով ազգային սահմանները: Այդ իսկ պատճառով դրա վերհանման, գնահատման և լուծման ուղիների առաջարկման համար միայն առանձին երկրի սահմաններում կատարված հետազոտությունները բավարար չեն: Այս առումով հատկապես կարևոր է այնպիսի համընդհանուր ընդունելի մեթոդների ու գործիքակազմի առկայությունը, որոնք հնարավորություն կտան ոչ միայն կատարել տվյալ երկրի գենդերային անհավասարության վերաբերյալ ընթացիկ իրավիճակի և միջժամանակային վերլուծություններ, այլ նաև դրանց համընդհանուր բնույթի հաշվին ապահովել համադրելիություն՝ տարբեր երկրներում գենդերային անհավասարության համեմատական վերլուծության համար: Այս համատեքստում մեծ նշանակություն ունեն հեղինակավոր միջազգային կազմակերպությունների վերլուծությունները, որոնց թվում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից 2006 թվականից ամեն տարի հրապարակվող Գենդերային անհավասարության համաշխարհային զեկույցները: Դրանցում ներկայացված է Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսը (ՀԳԱ ինդեքս), որն արտացոլում է գենդերային հավասարության ասպարեզում տարբեր երկրներում և տարածաշրջաններում նախորդ տարում արձանագրված զարգացումները: Ինդեքսը երկրների միջև համեմատություններ կատարելու, ինչպես նաև տարբեր

տարածաշրջաններում այս ասպարեզում առկա միտումներն ու խնդիրները վերհանելու լայն հնարավորություններ է ընձեռում: Բացի այդ, Զեկույցը նաև մեթոդաբանական ու տեղեկատվական հենք է ծառայում ազգային քաղաքականություն մշակող կառույցների և կառավարությունների համար: Այդ իսկ պատճառով ՀԳԱ ինդեքսը և դրա հիման վրա կազմված զեկույցը հաճախ դիտարկվում են որպես ռազմավարական ուղեցույց՝ գենդերային անհավասարության հաղթահարմանն ուղղված քաղաքականության մշակման և իրականացման գործում:

«Լույս» հիմնադրամը, կարևորելով զեկույցների շարքի դերը, յուրաքանչյուր ամենամյա զեկույցի հրապարակումից հետո կատարում է դրա վերաբերյալ վերլուծություն[1]:

Օրերս հրապարակվել է «Համաշխարհային գենդերային անհավասարության զեկույց – 2025»-ը[2] (այսուհետ՝ Զեկույց), որտեղ ներկայացված տեղեկատվությունն ընդգրկում է 148 երկիր: Դրանցից 100-ի համար ինդեքսը մշտապես՝ 2006 թվականից ի վեր, հաշվարկվել է:

Զեկույցում աշխարհը դիտարկվում է որպես 8 տարածաշրջանային խմբերի (*«Եվրոպա», «Հյուսիսային Ամերիկա», «Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազանի երկրներ», «Կենտրոնական Ասիա», «Ենթասահարական Աֆրիկա», «Արևելյան Ասիա և խաղաղօվկիանոսյան երկրներ», «Հարավային Ասիա», «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա»*) ամբողջություն: Հայաստանը զեկույցներում ներառված է 2007 թվականից և անցյալ տարվանից ընդգրկված է *«Կենտրոնական Ասիա»* խմբում:

Սույն հաշվետվությունում նախ հակիրճ նկարագրված են ՀԳԱ ինդեքսը և դրա հաշվարկման մեթոդաբանությունը, այնուհետև ներկայացված է Զեկույցի՝ աշխարհին վերաբերող առավել ուշագրավ տեղեկատվությունը: Հաջորդիվ վերլուծված է Հայաստանին վերաբերող տեղեկատվությունը: Հաշվետվության հաջորդ մասում կատարված են Հայաստանի և որոշ երկրների տարածաշրջանային տարբեր համադրումներ: Հաշվետվությունն ավարտվում է դրա կարևոր արդյունքների ու եզրահանգումների ամփոփմամբ:

---

[1] 2020-ից ի վեր կատարված բոլոր վերլուծությունները հասանելի են «Լույս» հիմնադրամի պաշտոնական կայքում՝ https://www.luys.am/index.php?m=publications...:
[2] Ամբողջական զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://reports.weforum.org/docs/WEF_GGGR_2025.pdf:

1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գենդերային անհավասարության ինդեքսն ագրեգացված ցուցանիշ է, որի հաշվարկման համար օգտագործվում է 4 ենթաինդեքս՝

1. *Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ*,
2. *Կրթության ձեռքբերում*,
3. *Առողջություն և կյանքի տևողություն*,
4. *Քաղաքական մասնակցություն*:

«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» ենթաինդեքսի հաշվարկման համար օգտագործվում է հինգ ցուցիչ՝ «*Աշխատուժի մասնակցության մակարդակ», «Միատեսակ աշխատանքների վարձատրությունների հավասարություն», «Վաստակած եկամուտ», «Օրենսդիր համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում զբաղվածություն»* և *«Մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում զբաղվածություն»:*

«Կրթության ձեռքբերում» ենթաինդեքսը հաշվարկվում է չորս ցուցիչների հիման վրա՝ *«Գրագիտության մակարդակ», «Տարրական կրթական համակարգում ներգրավվածություն», «Միջնակարգ կրթական համակարգում ներգրավվածություն»* և *«Բարձրագույն կրթական համակարգում ներգրավվածություն»*: Ենթաինդեքսն արտացոլում է կանանց և տղամարդկանց միջև կրթության հասանելիության անհավասարության աստիճանը (գենդերային ճեղքվածքը):

«Առողջություն և կյանքի տևողություն» ենթաինդեքսի հաշվարկման համար օգտագործվում է երկու ցուցիչ՝ *«Երկու սեռերի նորածինների թվաքանակների հարաբերակցություն»* և *«Առողջ կյանքի սպասվող տևողություն»* (այն կանանց և տղամարդկանց՝ առողջ ապրելու միջին տարիների քանակական հարաբերակցությունն է):

«Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսով գնահատվում է բարձրագույն օղակներում քաղաքական որոշումների կայացման կանանց և տղամարդկանց միջև անհավասարությունը: Դրա հաշվարկման համար օգտագործվում է երեք ցուցիչ՝ *«Կանայք խորհրդարանում», «Կանայք կառավարությունում»* և *«Պետության ղեկավարի պաշտոնում վերջին հիսուն տարում կանանց և տղամարդկանց կողմից պաշտոնավարելու տարիների հարաբերակցություն»*:

ՀԳԱ ինդեքսը հաշվարկելիս առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով.

1. Երկրները դասակարգվում են ոչ թե ըստ զարգացածության մակարդակի, այլ ըստ գենդերային ճեղքվածքի:

2. Երկրները գնահատվում են միայն ելքային ցուցանիշների հիման վրա, որոնք ընդհանրական են բոլոր երկրների համար և չպետք է կախված լինեն տվյալ երկրի քաղաքական, իրավական, մշակութային կամ սոցիալական առանձնահատկություններից:

3. Ինդեքսի առումով երկրի առաջընթացը վկայում է գենդերային ճեղքվածքի նվազման մասին: Ի դեպ, համարվում է, որ գենդերային ճեղքվածք կա նաև այն դեպքում, երբ կանայք են տղամարդկանցից ավելի նախընտրելի պայմաններում գտնվում:

Ինդեքսը հաշվարկվում է չորս քայլով.

Քայլ 1. Բոլոր տվյալները ներկայացվում են «կին/տղամարդ» քանակական հարաբերակցությունների տեսքով:

Քայլ 2. Վերոհիշյալ հարաբերակցություններից յուրաքանչյուրի համար որոշվում է գենդերային հավասարության առավելագույն արժեքը, որը գրեթե բոլոր դեպքերում հավասար է 1-ի (միայն երկու հարաբերակցությունների համար այն 1 չէ՝ նորածինների թվաքանակների սեռային հարաբերակցության համար այն 0.944 է, իսկ առողջ կյանքի սպասվող տարիների հարաբերակցության համար՝ 1.06):

Քայլ 3. Հաշվարկվում են ինդեքսի չորս ենթաինդեքսները՝ որպես դրանցից յուրաքանչյուրի հիմքում ընկած ցուցիչների կշռված միջին: Ենթաինդեքսներն արժեքներ են ընդունում [0;1] միջակայքից, որտեղ 1-ը համապատասխանում է սեռերի միջև լիակատար հավասարությանը, իսկ 0-ն՝ լիակատար անհավասարությանը:

Քայլ 4. Հաշվարկվում է ՀԳԱ ինդեքսը՝ որպես չորս ենթաինդեքսների միջին թվաբանական: Բնականաբար, ՀԳԱ ինդեքսի արժեքները նույնպես [0;1] միջակայքից են:

Որոշ դեպքերում ՀԳԱ ինդեքսը ներկայացվում է տոկոսային արտահայտությամբ՝ այդ դեպքում այն 100-պատիկ մեծ է, և արժեքների բազմությունը [0;100] միջակայքն է: Այս տեսքն ավելի հարմար է ՀԳԱ-ն որպես տվյալ երկրի գենդերային անհավասարության հաղթահարման սահման մեկնաբանելու տեսանկյունից: Այսպես, օրինակ, Հայաստանի 2024թ. ինդեքսը՝ 0.731, նշանակում է, որ մեր երկրում գենդերային անհավասարությունը

հաղթահարված է 73.1%-ով: Այսինքն՝ լիակատար գենդերային հավասարության հասնելու համար մնում է հաղթահարել ևս 26.9%:

2. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ[3]

Սույն բաժնում ներկայացված են Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսի միջազգային գնահատումները 2024 թվականի համար:

2.1. Համաշխարհային միտումներն ու արդյունքները

Գենդերային անհավասարության հաղթահարման համաշխարհային միջին մակարդակը 68.8% է՝ 0.3 տոկոսային կետով ավելի, քան նախորդ տարի:

Միայն նախորդ տարվա զեկույցում նույնպես ընդգրկված թվով 145 երկրները դիտարկելու դեպքում կստացվի, որ ինդեքսի համաշխարհային միջին արժեքը 2024 թվականի 68.4%-ից 2025 թվականին հասել է 68.8%-ի: Եթե դիտարկվեն միայն այն 100 երկրները, որոնք զեկույցների շարքի մեկնարկից (2006-ից) ի վեր մշտապես ընդգրկված են եղել ամենամյա զեկույցներում՝ առաջընթացը 0.4 տոկոսային կետ է ստացվում (2024 թվականի 68.6%-ից՝ 2025 թվականին 69.0%):

Նշվում է, որ առաջին զեկույցի հրապարակումից ի վեր գրանցված առաջընթացի տարեկան միջին տեմպերը պահպանվելու դեպքում համաշխարհային գենդերային ճեղքվածքն ամբողջությամբ փակելու համար աշխարհից կպահանջվի 123 տարի:

Զեկույցում նշվում է, որ դեռևս ոչ մի երկիր չի հասել լիարժեք գենդերային հավասարության: Իսլանդիան 92.6% ՀԳԱ-ով շարունակում է (16 տարի անընդմեջ) գլխավորել համաշխարհային վարկանիշային աղյուսակը և մնում է միակ երկիրը, որի ՀԳԱ-ն 2022 թվականից ի վեր 90%-ից ավելի է:

Համաձայն Զեկույցի՝ համաշխարհային վարկանիշային աղյուսակի միայն առաջին 10 հորիզոնականը զբաղեցնող երկրներն են գենդերային անհավասարությունը վերացրել 80 և ավելի տոկոսով:

Այս տարի ևս ՀԳԱ ինդեքսի ենթաինդեքսներից ամենափոքր արժեքը (ամենամեծ ճեղքվածքը) ունի ***«Քաղաքական մասնակցությունը»***՝ ընդամենը 22.9%, որը 0.4 տոկոսային կետով ավելի է, քան նախորդ տարի, իսկ 2006-ի համեմատ դրա բարելավումն էապես ավելի մեծ է, քան մնացած ենթաինդեքսներից

[3] Նախորդ տարիների որոշ տվյալներ Զեկույցում վերանայվել են: Սույն բաժնում համեմատությունների համար օգտագործված են թարմացված (և ոչ թե 2024թ. զեկույցի) տվյալները:

ցանկացածի գծով առաջընթացը: Առաջին զեկույցի հրապարակումից ի վեր գրանցված առաջընթացի տարեկան միջին տեմպերը պահպանվելու դեպքում այս ենթաինդեքսի գծով համաշխարհային գենդերային ճեղքվածքն ամբողջությամբ փակելու համար աշխարհից կպահանջվի 162 տարի:

Հաջորդ ամենափոքրը ***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»*** ենթաինդեքսն է՝ 61.0% կամ նախորդ տարվա համեմատ 0.5 տոկոսային կետով ավելի: 2006-ից ի վեր ենթաինդեքսն աճել է 5.6 տոկոսային կետով: Այս ենթաինդեքսի գծով համաշխարհային գենդերային ճեղքվածքն ամբողջությամբ փակելու համար աշխարհից կպահանջվի 135 տարի:

«Կրթության ձեռքբերում», և *«Առողջություն և կյանքի տևողություն»* ենթաինդեքսների համաշխարհային միջին արժեքները, ինչպես միշտ, էապես ավելի բարձր են:

«Կրթության ձեռքբերում» ենթաինդեքսը՝ 95.1%, շարունակում է մնալ երկրորդ ամենաբարձրը: Այս ենթաինդեքսի գծով համաշխարհային գենդերային ճեղքվածքն ամբողջությամբ փակելու համար աշխարհից կպահանջվի 17 տարի:

«***Առողջություն և կյանքի տևողություն***» ենթաինդեքսը 2025-ի արդյունքներով ամենաբարձրն է՝ 96.2%, սակայն սա միակ ենթաինդեքսն է, որի գծով 2006-ից ի վեր գրանցվել է հետընթաց՝ 0.2 տոկոսային կետով:

2.2. Գենդերային անհավասարությունն աշխարհի տարբեր հատվածներում

Ըստ գենդերային անհավասարության ինդեքսի կազմված համաշխարհային վարկանիշային աղյուսակի՝ առաջատարը 16-րդ տարին անընդմեջ Իսլանդիան է՝ 0.926 (92.6%) ինդեքսով: Լավագույն տասնյակում են նաև Ֆինլանդիան (2-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.879), Նորվեգիան (3-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.863), Մեծ Բրիտանիան (4-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.838), Նոր Զելանդիան (5-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.827), Շվեդիան (6-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.817), Մոլդովան (7-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.813), Նամիբիան (8-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.811), Գերմանիան (9-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.803) և Իռլանդիան (10-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.801): Առաջատար տասնյակի «նորեկներ» են Մեծ Բրիտանիան և Մոլդովան, որոնք նախորդ տարվա համեմատ իրենց դիրքը բարելավել են համապատասխանաբար 10 և 6 հորիզոնականներով:

Վարկանիշային աղյուսակի հետնապահներն են՝ Չադը (0.571), Սուդանը (0.570) և Պակիստանը (0.567):

Տարածաշրջանային գենդերային անհավասարության վարկանիշային աղյուսակում «Հյուսիսային Ամերիկա» տարածաշրջանը 75.8% ՀԳԱ միջին ինդեքսով առաջատարն է: Այս տարածաշրջանն առաջին տեղում է նաև *«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»* ենթաինդեքսի առումով: 2024-ի արդյունքներով այն կազմում է 76.1%, որը, սակայն, 2006 թվականից ի վեր բարելավվել է ընդամենը 0.6 տոկոսային կետով:

Տարածաշրջանային վարկանիշային աղյուսակում երկրորդ տեղը այս տարի 75.1% ցուցանիշով զբաղեցնում է նախորդ տարվա առաջատար «Եվրոպա» տարածաշրջանը: Տարածաշրջանի 40 երկրներից 8-ը գտնվում են համաշխարհային վարկանիշային աղյուսակի լավագույն տասնյակում, իսկ 37-ը՝ առաջին հարյուրյակում: Այնուամենայնիվ, տարածաշրջանը խիստ անհամասեռ է: Այսպես, տարածաշրջանի առաջատար Իսլանդիայի և հետնապահ Թուրքիայի ՀԳԱ ինդեքսների տարբերությունը 29.3 տոկոսային կետ է (92.6%-63.3%): Այս տարածաշրջանի միջին ինդեքսը 2006-ից ի վեր բարելավվել է 6.3 տոկոսային կետով:

Հաջորդ բարձր ՀԳԱ ինդեքսը՝ 74.5%, ունի «Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազանի երկրներ» տարածաշրջանը, որը ներառում է 23 երկիր և ինդեքսի՝ 2006 թվականից ի վեր բոլոր տարածաշրջաններից գրանցած ամենամեծ առաջընթացը՝ 8.6 տոկոսային կետ:

«Կենտրոնական Ասիա» տարածաշրջանը ՀԳԱ-ով չորրորդն է՝ 69.8% ցուցանիշով: Տարածաշրջանը ներառում է ընդամենը յոթ երկիր, որոնցից չորսը գտնվում են վարկանիշային աղյուսակի առաջին հարյուրյակում, սակայն միայն Հայաստանը և Վրաստանն են գրանցել 70%-ից բարձր ցուցանիշ (համապատասխանաբար՝ 73.1% և 72.9%): Տարածաշրջանային միջին ՀԳԱ-ի գծով 2006 թվականից ի վեր գրանցված ընդհանուր բարելավումը բոլոր տարածաշրջաններից ամենափոքրն է՝ 2.7 տոկոսային կետ: Գենդերային հավասարության առումով տարածաշրջանը համեմատաբար համասեռ է. առաջատար Հայաստանի (59-րդ հորիզոնական, 73.1%) և հետնապահ Տաջիկստանի (129-րդ հորիզոնական, 64.6%) ինդեքսների տարբերությունն ընդամենը 8.5 տոկոսային կետ է: «Կենտրոնական Ասիան» «Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսի գծով զիջում է բոլոր տարածաշրջաններին, սակայն այս ոլորտում 2006 թվականի համեմատ գրանցել է զգալի առաջընթաց՝ 5.3 տոկոսային կետ:

Հինգերորդը «Արևելյան Ասիա և Խաղաղօվկիանոսյան երկրներ» տարածաշրջանն է՝ 69.4% ցուցանիշով: Չնայած այն հանգամանքին, որ այս տարածաշրջանի երկրների կեսից ավելին գտնվում է համաշխարհային

վարկանիշային աղյուսակի առաջին հարյուրյակում, լավագույն տասնյակում ընդգրկված է միայն Նոր Զելանդիան (5-րդ հորիզոնական, 82.7%):

Հաջորդը «Ենթասահարյան Աֆրիկա» տարածաշրջանն է՝ 68.0% ցուցանիշով: 2006 թվականից ի վեր այս տարածաշրջանի միջին ցուցանիշը բարելավել է 5.6 տոկոսային կետով: 36 երկիր ներառող տարածաշրջանն աչքի է ընկնում իր չափազանց անհամասեռությամբ. ամենաբարձր ինդեքս ունեցող երկիրը՝ Նամիբիան (81.1%), զբաղեցնում է համաշխարհային վարկանիշային աղյուսակի 8-րդ հորիզոնականը, մինչդեռ տարածաշրջանային հետնապահ Չադը 146-րդն է՝ 24.0 տոկոսային կետով ցածր՝ 57.1%, ինդեքսով: Համաշխարհային վարկանիշային աղյուսակի առաջին հարյուրյակում է գտնվում այս տարածաշրջանի քսան երկիր:

«Հարավային Ասիա» տարածաշրջանը 7-րդն է՝ 64.6% ցուցանիշով: Յոթ երկիր ներառող այս տարածաշրջանից միայն Բանգլադեշն է գտնվում համաշխարհային վարկանիշային աղյուսակի առաջին հարյուրյակում՝ զբաղեցնելով 24-րդ հորիզոնականը՝ 77.5% ցուցանիշով: Տարածաշրջանի *«Քաղաքական մասնակցություն»* ենթաինդեքսը ամենամյա զեկույցների շարքի մեկնարկին՝ 2006 թվականին, բոլոր տարածաշրջաններից ամենաբարձրն էր՝ 21.9%: Այդ ժամանակվանից ի վեր տարածաշրջանի ենթաինդեքսը բարելավվել է 4.9 տոկոսային կետով, սակայն այն հետ է մնացել մնացած բոլոր տարածաշրջաններից:

Տարածաշրջանային հետնապահը «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա» տարածաշրջանն է՝ 61.7% ինդեքսով: 14 երկիր ներառող այս տարածաշրջանը 2006 թվականից ի վեր ունեցել է չափավոր՝ 3.9 տոկոսային կետի առաջընթաց:

3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2024թ. Հայաստանը գենդերային անհավասարության 0.731 ինդեքսով 148 երկրներ ներառող վարկանիշային աղյուսակում 59-րդն է (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Գենդերային անհավասարության ինդեքսը Հայաստանում և ՀՀ դիրքն ըստ ինդեքսի, 2007-2024թթ.



Գծապատկերից երևում է, որ 2007-ից ի վեր Հայաստանի ՀԳԱ ինդեքսն աճել է 6.6 տոկոսային կետով: Ընդ որում, 2015-ից ի վեր ինդեքսի աճ չի արձանագրվել միայն 2020-ին (ինդեքսը նվազել է 1.1 տոկոսային կետով) և 2023-ին (արձանագրվել է աճի դադար): 2024-ին նախորդ տարվա համեմատ ինդեքսն աճել է 1.0 տոկոսային կետով:

Հայաստանի ՀԳԱ-ն 4.3 տոկոսային կետով գերազանցում է համաշխարհային միջինին (Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. ՀՀ գենդերային անհավասարության ինդեքսը, ենթաինդեքսները և աշխարհի միջին գնահատականները, 2024թ.



Այս տարի ևս Հայաստանի երեք ենթաինդեքսներ (***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ», «Կրթության ձեռքբերում» և «Քաղաքական մասնակցություն»***) բարձր են դրանց համաշխարհային միջին մակարդակներից: ***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»*** ենթաինդեքսի պարագայում Հայաստանը գենդերային անհավասարությունը հաղթահարել է 66.8%-ով (ենթաինդեքսի համաշխարհային միջինը 61.0% է): Հայաստանի ***«Կրթության ձեռքբերում»*** ենթաինդեքսը 98.0% է և 2.9 տոկոսային կետով գերազանցում է աշխարհի միջին ցուցանիշին: ***«Քաղաքական մասնակցություն»*** ենթաինդեքսի համաշխարհային միջին ցուցանիշը 22.9% է, իսկ Հայաստանի ցուցանիշը՝ 31.6%: ***«Առողջություն և կյանքի տևողություն»*** ենթաինդեքսը 96.1% է՝ աշխարհի միջին ցուցանիշին զիջելով 0.1 տոկոսային կետով:

Հայաստանում նախորդ տարվա համեմատ գենդերային անհավասարության հաղթահարման գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Հայաստանի գենդերային անհավասարության ենթաինդեքսները և դրանց հաշվարկում օգտագործվող ցուցանիշները, 2023-2024թթ. *)

Ենթաինդեքս • *Ցուցիչ*	**Տարի**	**Դիրք**	**<< ինդեքս**	**Համաշ-խարհ. միջին**	**Կին**	**Տղա-մարդ**
Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ	**2023**	**65**	**70.7%**	**60.5%**		
	2024	**91**	**66.8%**	**61.0%**		
• *Աշխատուժի մասնակցության մակարդակ*	2023	30	87.4%		62.8%	71.4%
	2024	89	74.9%		56.9%	75.9%
• *Միատեսակ աշխատանքների վարձատրությունների հավասարություն, 1-7 (լավագույն)*	2023	45	69.4%			
	2024	49	69.4%			
• *Վաստակած եկամուտ, ԱՄՆ դոլար*	2023	87	60.7%		12,440	20,480
	2024	106	55.5%		14,010	25,260
• *Օրենսդիր համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում զբաղվածություն*	2023	94	42.2%		29.7%	70.3%
	2024	91	40.3%		28.7%	71.3%
• *Մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում զբաղվածություն*	2023	1	100%		41.1%	58.9%
	2024	1	100%		35.8%	64.2%
Կրթության ձեռքբերում	**2023**	**83**	**99.1%**	**94.9%**		
	2024	**99**	**98.0%**	**95.1%**		
• *Գրագիտության մակարդակ*	2023	58	99.9%			
	2024	1	100%		99.7%	99.9%
• *Տարրական կրթական համակարգում ներգրավվածություն*	2023	108	98.2%		89.8%	91.5%
	2024	117	96.9%		94.9%	98.0%
• *Միջնակարգ կրթական համակարգում ներգրավվածություն*	2023	1	100%		96.9%	96.9%
	2024	114	97.5%		88.2%	90.5%
• *Բարձրագույն կրթական համակարգում ներգրավվածություն*	2023	1	100%		51.6%	68.3%
	2024	1	100%		48.8%	63.8%
Առողջություն և կյանքի տևողություն	**2023**	**138**	**95.8%**	**96.0%**		
	2024	**122**	**96.1%**	**96.2%**		
• *Նորածինների հարաբերակցություն ըստ սեռի*	2023	143	91.3%			
	2024	145	91.7%			
• *Առողջ կյանքի տևողության տարիներ*	2023	1	106.0%			
	2024	1	106.0%			
Քաղաքական մասնակցություն	**2023**	**70**	**22.7%**	**22.5%**		
	2024	**48**	**31.6%**	**22.9%**		
• *Կանայք խորհրդարանում*	2023	38	57.5%		36.5%	63.5%
	2024	32	62.1%		38.3%	61.7%

• *Կանայք կառավարությունում*	2023	98	20.0%		16.7%	83.3%
	2024	38	50.0%		33.3%	66.7%
• *Պետության կին/տղամարդ ղեկավարների իշխանության տարիներ (վերջին 50 տարիների կտրվածքով)*	2023	80	0.0%		0	50
	2024	81	0.0%		0	50

**) Ցուցանիշի արժեքը նշված է կանաչ գույնով, եթե 2024 թվականին 2023-ի համեմատ գրանցվել է բարելավում, կարմիրով՝ վատթարացման դեպքում և դեղինով, եթե այն մնացել է անփոփոխ:*

Աղյուսակից երևում է, որ **2024-ին, ինչպես և նախորդ տարի, ցուցանիշների մեծ մասի առումով բարելավում չի գրանցվել:**

***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»* ենթաինդեքսի գծով արձանագրվել է բավական լուրջ նահանջ՝ այն նախորդ տարվա համեմատ նվազել է 3.9 տոկոսային կետով, իսկ դրա գծով վարկանիշային դիրքը վատթարացել է 26 հորիզոնականով: Ի դեպ, թե՛ ենթաինդեքսը և թե՛ դրա գծով վարկանիշային դիրքը 2023-ին ևս զգալիորեն վատթարացել էին, և երկու տարիների ընդհանուր նահանջը կազմում է 4.8 տոկոսային կետ և 39 հորիզոնական: Նախորդ տարվա համեմատ վատթարացումը հատկապես շոշափելի է «*Աշխատուժի մասնակցության մակարդակ*» և «*Վաստակած եկամուտ*» ցուցիչների գծով՝ համապատասխանաբար 12.5 տոկոսային կետով (վարկանիշային 59 հորիզոնականով) և 5.2 տոկոսային կետով (վարկանիշային 19 հորիզոնականով): «*Աշխատուժի մասնակցության մակարդակ*» ցուցիչի նվազումը պայմանավորված է նրանով, որ տղամարդկանց և կանանց ներգրավվածության ցուցանիշների տարբերությունը 2023-ի 9-ից 2024-ին հասել է 19 տոկոսային կետի: 2024-ին *«Աշխատուժի մասնակցության մակարդակում»*- տղամարդկանց տոկոսային ներգրավվածությունն ավելացել է, իսկ կանանցը՝ նվազել: «*Վաստակած եկամուտ*» ցուցիչի նվազման պատճառը նույնպես տղամարդկանց և կանանց ցուցանիշների միջև ճեղքվածքի ավելացումն է. տղամարդկանց և կանանց վաստակած եկամուտների միջև տարբերությունը 2023-ի 8,040 PPP ԱՄՆ դոլարից 2024-ին հասել է 11,250 PPP ԱՄՆ դոլարի, այսինքն՝ 2024-ին տղամարդկանց վաստակած եկամուտների մակարդակն ավելի շատ է ավելացել, քան կանանցը:**

***«Կրթության ձեռքբերում»* ենթաինդեքսը նվազել է միանգամից 1.1 տոկոսային կետով և կազմել 98.0%: Քանի որ երկրների մեծ մասի դեպքում այս ենթաինդեքսն ավանդաբար բարձր է (83 երկրի համար այն 99 և ավելի տոկոս է), և ենթաինդեքսի կտրուկ փոփոխություններ սովորաբար չեն լինում, սա այս ենթաինդեքսի համար չափազանց լուրջ վատթարացում է: Պատահական չէ, որ գրանցվել է վարկանիշային դիրքի զգալի՝ 16 հորիզոնականով, նահանջ: Ի դեպ, 2023-ին այն պարզապես «գահավիժել էր»՝ նահանջը միանգամից 48 հորիզոնականով էր: Հայաստանի *«Կրթության ձեռքբերում»* ենթաինդեքսը**

2007-ից ի վեր (առաջին՝ 2006թ., զեկույցում Հայաստանը ներառված չի եղել) երբևիցե այսքան ցածր չի եղել: Ավելին, անցած 18 տարիներից 7-ի համար (որոնցից 5-ն անընդմեջ՝ 2012-2016 թվականներին) Հայաստանի *«Կրթության ծեռքբերում»* ենթաինդեքսն ունեցել է առավելագույն՝ 100% արժեք:

***«Կրթության ծեռքբերում»* ենթաինդեքսի գծով նահանջի պատճառը տարրական և միջնակարգ կրթական համակարգում ներգրավվածության ցուցիչների նվազումն է՝ համապատասխանաբար 98.2%-ից մինչև 96.9%, և 100%-ից մինչև 97.5%, ինչի պատճառով մեր երկրի դիրքն առաջին ցուցիչի գծով վատթարացել է 9 հորիզոնականով, իսկ երկրորդ ցուցիչի գծով Հայաստանը 1-ին հորիզոնականից հայտնվել է 114-րդում: Այս դեպքում պատճառը տղա և աղջիկ աշակերտների տոկոսային ներգրավվածության ցուցանիշների միջև ճեղքվածքի՝ նախորդ տարվա համեմատ ավելացումն է. առաջին ցուցիչի դեպքում ճեղքվածքը գրեթե կրկնապատկվել է, իսկ երկրորդի դեպքում՝ զրոյական ճեղքվածքը մեկ տարում հասել է 2.3 տոկոսային կետի: Այսինքն՝ տարրական կրթական համակարգում տղաների ներգրավվածության աճն ավելի է, քան աղջիկներինը, իսկ միջնակարգ կրթական համակարգում տղաների ներգրավվածության նվազումն ավելի փոքր է, քան աղջիկներինը: Ի դեպ, *«Կրթության ծեռքբերում»* ենթաինդեքսի գծով նահանջ Հայաստանում երրորդ տարին անընդմեջ է արձանագրվում: Ենթաինդեքսի գծով զգալի և շարունակական հետընթացը պատկան մարմինների անհետևողականության պատճառով կրթության ասպարեզում գենդերային հավասարության ավանդաբար բարվոք վիճակից չափազանց մտահոգիչ վատթարացման մասին է վկայում:**

«Առողջություն և կյանքի տևողություն» ենթաինդեքսը 2024-ին կազմել է 96.1%՝ նախորդ տարվա համեմատ աճելով 0.3 տոկոսային կետով: Բարելավումը, ինչպես և նախորդ տարի, պայմանավորված է *«Նորածինների հարաբերակցություն ըստ սեռի»* ցուցանիշի աճով՝ 0.4 տոկոսային կետով:

«Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսը 2023-ի համեմատ աճել է 8.9 տոկոսային կետով: Առաջընթացը պայմանավորված է երկու հանգամանքով. աճել են «Կանայք խորհրդարանում» և «Կանայք կառավարությունում» ցուցիչները, քանի որ թե՛ խորհրդարանում և թե՛ կառավարությունում ավելացել է կանանց թիվը:

Ինչպես նշվել է վերը, գենդերային անհավասարության ինդեքսը հաշվարկվում է որպես դրա չորս ենթաինդեքսների միջին թվաբանական: Նկատի ունենալով, որ Հայաստանի դեպքում դրանցից երկուսն էականորեն նվազել են, իսկ մեկն ընդամենը փոքրիկ աճ է գրանցել, **ստացվում է, որ Հայաստանի ինդեքսի՝ նախորդ տարվա համեմատ 1.0 տոկոսային կետով աճն առավելապես պայմանավորված է *«Քաղաքական մասնակցություն»* ենթաինդեքսի**

բավական բարձր աճով, որը, ինչպես նշվեց, խորհրդարանում և կառավարությունում կանանց թվի աճի արդյունք է:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայաստանը դիտարկելով տարածաշրջանային համապատկերում՝ երկրի դիրքի և արձանագրված ցուցանիշների շուրջ կատարենք համեմատական վերլուծություն տարբեր տարածաշրջանային և սահմանակից՝ հարևան երկրների հետ:

Աղյուսակ 2. ՀԳԱ ինդեքսը «Կենտրոնական Ասիա» տարածաշրջանում, 2023-2024թթ.

Երկիր	2023 թվական			2024 թվական		
	Դիրքը տարածաշրջանում	Դիրքն աշխարհում	Ինդեքս, %	Դիրքը տարածաշրջանում	Դիրքն աշխարհում	Ինդեքս, %
Հայաստան	***1***	***64***	***72.1***	***1***	***59***	***73.1***
Վրաստան	2	69	71.6	2	63	72.9
Ղազախստան	3	76	71.0	3	92	69.8
Ղրղզստան	4	90	70.0	4	95	69.6
Ադրբեջան	5	103	68.5	5	100	68.8
Ուզբեկստան	6	108	68.1	6	110	67.8
Տաջիկստան	7	112	67.3	7	129	64.6

Պայմանավորված այն հանգամանքով, որ 2023 թվականից Մոլդովան և Բելառուսն ընդգրկված են այլ տարածաշրջանային խմբում, Հայաստանը երկու տարի անընդմեջ գլխավորում է տարածաշրջանային վարկանիշային աղյուսակը:

Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ՝ Զեկույցում ներառված երկրներից[4] ՀԳԱ ինդեքսով և աշխարհում զբաղեցրած դիրքով Հայաստանը զիջում է միայն 73.6% ՀԳԱ ինդեքս ունեցող և համաշխարհային վարկանիշային աղյուսակի 54-րդ հորիզոնականը զբաղեցնող Բելառուսին:

[4] Ռուսաստանի Դաշնությունը «Համաշխարհային գենդերային անհավասարության զեկույց - 2025»-ում ևս (ինչպես և նախորդ երկու տարիներին) ներառված չէ:

ԵԱՏՄ երկրներից միայն Հայաստանի և Բելառուսի ՀԳԱ ինդեքսն է աճել համապատասխանաբար 1.0 և 0.3 տոկոսային կետով, իսկ վարկանիշային դիրքը բարելավվել է համապատասխանաբար 5 և 1 հորիզոնականով: Ղազախստանի և Ղրղզստանի պարագայում վատթարացել են թե՛ ինդեքսը, թե՛ վարկանիշային դիրքը՝ համապատասխանաբար՝ 1.2 ու 0.4 տոկոսային կետով և 16 ու 5 հորիզոնականով:

Աղյուսակ 3-ում համեմատական տվյալներ են ներկայացված Հայաստանում և սահմանակից երկրներում գենդերային անհավասարության ինդեքսի և ենթաինդեքսների վերաբերյալ:

Աղյուսակ 3. ՀԳԱ ինդեքսը և ենթաինդեքսները Հայաստանում և հարևան երկրներում, 2024թ.

Ցուցանիշ / Երկիր		Հայաստան	Վրաստան	Ադրբեջան	Թուրքիա	Իրան
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ	**Ինդեքս, %**	**73.1**	**72.9**	**68.8**	**63.3**	**58.3**
	Դիրք	**59**	**63**	**100**	**135**	**145**
• Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ	Ինդեքս, %	66.8	72.4	74.8	51.8	34.9
	Դիրք	91	53	37	133	146
• Կրթության ձեռքբերում	Ինդեքս, %	98.0	98.5	98.8	98.6	98.0
	Դիրք	99	94	89	92	100
• Առողջություն և կյանքի տևողություն	Ինդեքս, %	96.1	97.5	93.4	96.8	96.1
	Դիրք	122	41	148	82	120
• Քաղաքական մասնակցություն	Ինդեքս, %	31.6	23.4	8.1	5.9	4.3
	Դիրք	48	71	126	139	142

Ինչպես երևում է աղյուսակից, 2024 թվականի արդյունքներով Հայաստանը գենդերային անհավասարության ինդեքսով գերազանցում է բոլոր սահմանակից (հարևան) երկրներին: Ի դեպ, **Հայաստանը հարևան երկրներին գերազանցում է ՀԳԱ ինդեքսի չորս ենթաինդեքսերից միայն մեկի՝ *«Քաղաքական մասնակցություն»* ենթաինդեքսի գծով, այսինքն՝ բացառապես այս ենթաինդեքսի շնորհիվ է, որ Հայաստանը բոլոր հարևաններից ավելի մեծ ինդեքս ունի:**

Հայաստանի չորս հարևաններից ամենամեծ ՀԳԱ ինդեքսը՝ 72.9%, ունի համաշխարհային վարկանիշային աղյուսակում 63-րդ հորիզոնականը զբաղեցնող Վրաստանը: Հաջորդն Ադրբեջանն է (68.8%, 100-րդ հորիզոնական): Այնուհետև Թուրքիան է (63.3%, 135-րդ հորիզոնական): Վերջինն Իրանն է (58.3%, 145-րդ հորիզոնական):

«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» ենթաինդեքսի գծով Հայաստանից առաջ են Ադրբեջանը և Վրաստանը (համապատասխանաբար 8.0 և 5.6 տոկոսային կետով):

«Կրթության ձեռքբերում» **ենթաինդեքսի գծով արձանագրված լուրջ անկման պատճառով Հայաստանը 2024-ի արդյունքներով զիջում է իր չորս հարևաններից երեքին՝ Ադրբեջանին, Թուրքիային և Վրաստանին, իսկ Իրանի հետ ունի նույն ենթաինդեքսը: Մինչդեռ 2023-ի արդյունքներով Հայաստանը չէր գերազանցում միայն Վրաստանին (երկու երկրներն ունեին նույն՝ 99.1%, ենթաինդեքսը):**

«Առողջություն և կյանքի տևողություն» ենթաինդեքսով մեր երկիրը գերազանցում է միայն Ադրբեջանին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով.

- **Հայաստանը գենդերային անհավասարության 73.1% ինդեքսով 2024թ. զբաղեցնում է համաշխարհային վարկանիշային աղյուսակի 59-րդ հորիզոնականը:**

  Ինդեքսը *«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»* ենթաինդեքսի գծով նախորդ տարվա համեմատ բավական լուրջ նահանջ է արձանագրել՝ 3.9 տոկոսային կետով, ինչի հաշվին մեր երկրի վարկանիշային դիրքը վատթարացել է 26 հորիզոնականով: Ընդ որում, վերջին երկու տարիների կտրվածքով վատթարացումը 39 հորիզոնական է: Նախորդ տարվա համեմատ նահանջը պայմանավորված է «Աշխատուժի մասնակցության մակարդակ» և «Վաստակած եկամուտ» ցուցիչների վատթարացմամբ: 2024-ին «Աշխատուժի մասնակցության մակարդակում» տղամարդկանց տոկոսային ներգրավվածությունն ավելացել է, իսկ կանանցը՝ նվազել: «Վաստակած եկամուտ» ցուցիչի վատթարացման պատճառն այն է, որ նախորդ տարվա համեմատ 2024-ին տղամարդկանց վաստակած եկամուտների մակարդակն ավելի շատ է ավելացել, քան կանանցը:

  «Կրթության ձեռքբերում» **ենթաինդեքսը նախորդ տարվա համեմատ նվազել է միանգամից 1.1 տոկոսային կետով՝ կազմելով 98.0%: Ընդ որում, քանի որ 1.1 տոկոսային կետով նվազումն այս ենթաինդեքսի համար չափազանց լուրջ վատթարացում է, արձանագրվել է Հայաստանի վարկանիշային դիրքի զգալի՝ 16 հորիզոնականով նահանջ:**

Հայաստանի *«Կրթության ձեռքբերում»* ենթաինդեքսը երբևէ այսքան ցածր չի եղել: Այս ենթաինդեքսի գծով նահանջի պատճառը տարրական և միջնակարգ կրթական համակարգում ներգրավվածության ցուցիչների նվազումն է՝ դրանցից առաջինի գծով մեր երկրի դիրքը վատթարացել է 9 հորիզոնականով, իսկ երկրորդ ցուցիչի գծով Հայաստանը 1-ինից տեղափոխվել է 114-րդ հորիզոնական: Այս դեպքում պատճառը նախորդ տարվա համեմատ տղա և աղջիկ աշակերտների տոկոսային ներգրավվածության ցուցանիշների միջև ճեղքվածքի ավելացումն է: Տարրական կրթական համակարգում տղաների ներգրավվածության աճն ավելի է, քան աղջիկներինը, իսկ միջնակարգ կրթական համակարգում տղաների ներգրավվածության նվազումն ավելի փոքր է, քան աղջիկներինը: Ի դեպ, *«Կրթության ձեռքբերում»* ենթաինդեքսի գծով նահանջ Հայաստանում երրորդ տարին անընդմեջ է արձանագրվում: Ենթաինդեքսի գծով զգալի և շարունակական հետընթացը պատկան մարմինների անհետևողականության պատճառով կրթության ասպարեզում գենդերային հավասարության ավանդաբար բարվոք վիճակից չափազանց մտահոգիչ վատթարացման մասին է վկայում:

Քանի որ գենդերային անհավասարության ինդեքսը չորս ենթաինդեքսների միջին թվաբանականն է, որոնցից երկուսը Հայաստանի դեպքում էականորեն նվազել են, իսկ մեկի աճն աննշան է, ստացվում է, որ Հայաստանի ինդեքսի՝ նախորդ տարվա համեմատ աճը առավելապես պայմանավորված է «Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսի բավական բարձր աճով, ինչը խորհրդարանում և կառավարությունում կանանց թվի աճի արդյունք է:

- Հայաստանը գլխավորում է «Կենտրոնական Ասիա» տարածաշրջանի վարկանիշային աղյուսակը:

- ՀԳԱ ինդեքսով և աշխարհում զբաղեցրած դիրքով Հայաստանը Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ՝ Զեկույցում ներառված երկրներից զիջում է միայն Բելառուսին:

- 2024 թվականի արդյունքներով Հայաստանը գենդերային անհավասարության ինդեքսով գերազանցում է բոլոր հարևան երկրներին: Ընդ որում, **Հայաստանն ինդեքսի չորս ենթաինդեքսերից միայն *«Քաղաքական մասնակցության»* գծով է գերազանցում հարևան երկրներին, այսինքն՝ բացառապես այս ենթաինդեքսի գծով ունեցած մեծ առավելության շնորհիվ է, որ Հայաստանը բոլոր հարևաններից ավելի մեծ ինդեքս ունի:**

«Կրթության ձեռքբերում» **ենթաինդեքսի գծով Հայաստանն իր չորս հարևաններից չի զիջում միայն Իրանին՝ այդ երկրի հետ ունենալով ենթաինդեքսի նույն մեծությունը: Մինչդեռ նախորդ տարի այս ենթաինդեքսի գծով Հայաստանը չէր զիջում հարևաններից ոչ մեկին:**

«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» ենթաինդեքսով Հայաստանը հարևաններից զիջում է Ադրբեջանին և Վրաստանին (համապատասխանաբար 8 և 5.6 տոկոսային կետով):

«Առողջություն և կյանքի տևողություն» ենթաինդեքսով մեր երկիրը գերազանցում է միայն Ադրբեջանին:

- 2024 թվականին գենդերային անհավասարության ինդեքսի համաշխարհային միջին մակարդակը 68.8% է՝ նախորդ տարվա ցուցանիշից 0.3 տոկոսային կետով ավելի: Անցած 19 տարվա բարելավման միջին տեմպերը պահպանվելու դեպքում համաշխարհային գենդերային ճեղքվածքն ամբողջությամբ փակելու համար կպահանջվի 123 տարի:

  Գենդերային անհավասարության ինդեքսի հիման վրա կազմված համաշխարհային վարկանիշային աղյուսակը 16-րդ տարին անընդմեջ գլխավորում է Իսլանդիան՝ 0.926 (92.6%) ինդեքսով: Վարկանիշային աղյուսակի հետնապահը Պակիստանն է՝ 0.567 (56.7%) ինդեքսով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: